ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿԻ ՄԻՋԵՎ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ), ի դեմս ռեկտոր Դավիթ Խիթարյանի և «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Քոլեջ), ի դեմս տնօրեն Վաղինակ Գալուստյանի, հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանարապետության 2015թ. հուլիսի 8-ի 752-Ն որոշմամբ ընդունված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու» կարգը կառավարության 2006թ. հունվարի 12-ի թիվ 73-ն որոշմամբ հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների՝ ըստ ուսուցման հիմքի, ձևի, տևողության եվ որակավորումների» ցանկը՝

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. *Ինստիտուտը՝*

ա) ապահովում է Քոլեջի 2020-2021 ուստարվա միջին մասնագիտական կրթության ծրագրով բարձր առաջադիմությամբ շրջանավարտների ուսման ու կրթության շարունակությունը Ինստիտուտի երկրորդ կուրսի՝ առկա և հեռակա բաժիններում, հարցազրույցի արդյունքներով՝ «011401.00.6» դասիչով «Մասնագիտական մանկավարժություն» (կրթական ծրագիր՝ 011401.09.6-«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ») մասնագիտությամբ:

բ) համագործակցում է Քոլեջի հետ՝ միջին մասնագիտական «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի կատարելագործման, բարեփոխման և փոխհամաձայնեցման աշխատանքներում, ինչպես նաև ցույց տալիս համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ ուսումնական գործընթացն առավել արդյունավետ ու նպատակային կազմակերպելու նպատակով,

գ) իրականացնում է Ինստիտուտ տեղափոխվող Քոլեջի բարձր առաջադիմությամբ շրջանավարտների մրցութային ընտրության, ընդունելության, ակադեմիական տարբերությունների հանձնման և հետագա ուսումնական գործընթացների կազմակերպումը Ինստիտուտում:

2. Քոլեջը.

1) պետական ամփոփիչ ատեստավորումից առաջ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, Քոլեջում հրապարակում է Ինստիտուտում ուսուցումը շարունակելու համար հատկացված տեղերի թվաքանակը՝ նշելով մասնագիտությունը և ուսուցման ձևը.

3) ընդգրկում է Ինստիտուտի ներկայացուցչին պետական որակավորող հանձնաժողովի կազմում.

4) Ինստիտուտ ներկայացնում է պետական որակավորող հանձնաժողովի արձանագրությունը՝ տեղափոխման հավակնորդների մրցույթի վերաբերյալ.

5) համագործակցում է Ինստիտուտի հետ ուսումնական և առարկայական ծրագրերի, պլանների, մեթոդական ցուցումների մշակման, վերանայման, կատարելագործման շրջանակներում՝ պահպանելով տվյալ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները:

3.Սույն համաձայնագրի գործունեությունը դադարեցվում է՝ կողմերից որևէ մեկի պարտավորությունները չկատարելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

4.Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով: Կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	**«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ**
ք. Երևան, Ալ. Մանուկյան 11	**ք. Երևան, Մանուկյան փող.31**
Հեռ.՝ 10 55 33 10	**Հեռ.՝ 10 77 34 30**
ՀՎՀՀ 01505821	**ՀՎՀՀ 01805343**
Հ/Հ 16308103145	**Հ/Հ 247423314720**
Ռեկտոր	**Տնօրեն**
Դավիթ Խիթարյան	**Վաղինակ Գալուստյան**
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.

Սույն համաձայնագիրը ստորագրված է Երևան քաղաքում, 2021 թվականի _____ին: